ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 111-Ա
« 28 » ԱՊՐԻԼԻ 2025Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N878-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2025-04-28 12:56:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված՝
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025 թվականի ապրիլի 28 -ի
թիվ 111 - Ա որոշման

Ծրագիր
փորձագետի ներգրավման և իրականացվող աշխատանքների

Հիմք ընդունելով 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 878-Ն որոշումը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունում՝ ֆինանսական վարչության պետի պաշտոնի ժամանակավոր թափուր լինելու հանգամանքով պայմանավորված, աշխատանքների իրականացման ծավալների կտրուկ ավելացման դեպքով ներգրավել փորձագետ:

1.Հիմնավորումները՝

Պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացման դեպքով՝

1. Կազմակերպում է տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի ծրագրերով և կառավարության որոշումներով ՀՀ Վայոց ձորի մարզին ու մարզպետի աշխատակազմին հատկացված միջոցների շրջանակներում նախահաշիվների, ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերի կազմման և /LSFinanc/ համակարգի միջոցով մուտքագրման աշխատանքները.
2. Կազմակերպում է մարզպետի աշխատակազմում հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու գործընթացը.
3. Կազմակերպում է մարզպետի աշխատակազմի կարիքների համար մատակարարված ապրանքների, ծառայությունների վճարային փաստաթղթերի ճշտության ստուգման, հաշվառման և փոխանցման աշխատանքները.
4. Կազմակերպում է Մարզի համայնքների և մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպությունների հրապարակման ենթակա համապատասխան նյութերի gnumner.am կայքում հրապարակելու աշխատանքները՝ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությանը համապատասխան.
5. Կազմակերպում է մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային ցուցանիշների հավաքագրման, տարեկան և եռամսյակային ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ընդունման, ստուգման աշխատանքները.

6. Կազմակերպում է տեղական ինքնակառավարման մարմիններին պետական բյուջեից հատկացված նպատակային հատկացումները ֆինանսավորելու նպատակով անհրաժեշտ պայմանագրերի կազմման, փաստաթղթերի հավաքագրման և վճարման աշխատանքները.
7. Կազմակերպում է ամսական կտրվածքով համայնքների, ենթակա կազմակերպությունների բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման վերաբերյալ տեղեկատվության ամփոփման և պետական լիազորված մարմին ներկայացման աշխատանքները.
8. Կազմակերպում է մարզպետի աշխատակազմի և մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ հաջորդ տարվա բյուջեի հաշվին կատարվող ծախսերի բյուջետային ֆինանսավորման հայտերի, միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման և ներկայացման աշխատանքները.

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը՝ 1 /մեկ/ տարի:

3. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 322.816 /երեք հարյուր քսաներկու հազար ութ հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ: Փորձագետի հիմնական աշխատավարձը համապատասխանում է քաղաքացիական ծառայողի ղեկավար պաշտոնների 4-րդ ենթախմբին համապատասխանող սանդղակի նվազագույն գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալին:

4. Ակնկալվող արդյունքը՝ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության կանոնադրությամբ սահմանված պահանջների արդյունավետ իրականացումը:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները՝ յուրաքանչյուր երեք ամիսը մեկ:

6. Աշխատանքների գնահատման չափանիշները՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել մարզպետի աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների, համայնքների բյուջետային գործընթացի կազմակերպումը օրենսդրությանը համապատասխան: Աշխատանքը գնահատվում է, ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել: Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Փորձագետին ներկայացվող պահանջները՝ փորձագետը պետք է ունենա

1) Համապատասխան բնագավառի՝ գործարարություն և վարչարարություն, տնտեսագիտություն ուղղվածությամբ բարձրագույն կրթություն.

2) ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ պետական գնումների բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

2025-04-28 15:55:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**